EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՆԱԼԹԱԿՅԱՆԸ ԵՎ ԱՅԼՔ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգատ թիվ 47448/12)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

4 հուլիսի 2023թ.

Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Նալթակյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք), հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Անյա Սիբերտ Ֆուա [Anja Seibert-Fohr]՝ *Նախագահ*,

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Անա Մարիա Գեռա Մարտինս [Ana Maria Guerra Martins]՝ *դատավորներ*,

եւ Վալենտին Նիկոլեսկու [Valentin Nicolescu]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալի պաշտոնակատար*,

հաշվի առնելով՝

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածին համապատասխան Հավելված I-ում նշված դիմումատուների (դիմումատուներ) կողմից, որոնց ներկայացրել են Երեւանում գործող իրավաբաններ պրն Գ. Մարգարյանը, տկն Մ. Ղուլյանը եւ տկն Ս. Սահակյանը, ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2012 թվականի հունիսի 13-ին Դատարան ներկայացված գանգատը (թիվ 47448/12),

գանգատի մասին Հայաստանի կառավարությանը (Կառավարություն) ծանուցելու մասին որոշումը, որին ներկայացրել է լիազոր ներկայացուցիչ՝ Միջազգային իրավական հարցերով Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ պրն Ե. Կիրակոսյանը,

կողմերի դիտարկումները,

2023 թվականի հունիսի 13-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԳՈՐԾԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Գործը վերաբերում է դիմումատուների գույքի օտարմանը (մանրամասների համար տե՛ս Հավելված II) եւ դրան հետեւող դատական վարույթներին:

2. 2010 թվականի փետրվարի 25-ին «ԷՅ ԸՆԴ ԷՄ ՌԵՅՐ» ՍՊԸ-ն [“A&M RARE” LLC] (Ընկերություն), որը գրանցվել էր 2010 թվականի փետրվարի 5-ին դրա հիմնադրվելուց անմիջապես հետո՝ նույն օրը, դիմում է ներկայացրել Կառավարություն՝ հանքային ջրերի գործարան կառուցելու նպատակով Կոտայքի մարզի Արտավազի գյուղական համայնքում հող ձեռք բերելու համար:

3. Նույն օրը Կառավարությունն ընդունել է թիվ 241-Ն որոշումը (Որոշում)՝ հաստատելով Արտավազի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում օտարման ենթակա գոտիները, որոնք ներառում էին դիմումատուներին պատկանող գյուղատնտեսական հողերը: Որոշման մեջ նշված էր, որ օտարումը հիմնավորված էր գերակա հանրային շահով՝ տարածքային համաչափ զարգացումն ապահովելու նպատակով հանքային ջրերի գործարանի կառուցման ներդրումային նախագիծն իրականացնելու համար: Որոշման համաձայն՝ նախագծի արդյունավետ իրականացումը հնարավոր չէր լինի ապահովել առանց տվյալ գույքի օտարման, քանի որ հողամասերի ընտրությունը կատարվել էր՝ հաշվի առնելով, ի թիվս այլ գործոնների, դրանց դասավորությունը, դիրքը եւ թարմ հանքային ջրերի առկայությունը:

4. Որոշումն ուժի մեջ է մտել 2010 թվականի ապրիլի 10–ին:

5. 2010 թվականի հուլիսի 13-ին Ընկերությունն ուղարկել է անշարժ գույքի օտարման պայմանագրերի նախագծերը դիմումատուներ Երվանդ Նալթակյանին, Յուրիկ Նալթակյանին, Մեխակ Աբրահամյանին, Խորեն Նալթակյանին, Ծովինար Մաթեւոսյանին, Մարգուշ Բադալյանին, Լյովա Սամսոնյանին, Արթուրիկ Առուստամյանին եւ Ալեքսան Թավաքալյանին, որոնք կա՛մ իրենց պատկանող գույքի միակ սեփականատերերն էին, կա՛մ նրանց անունները գույքի

նկատմամբ սեփականության վկայականներում առաջինն էին նշված (սեփականատեր հանդիսացող դիմումատուներ): Այդ պայմանագրերի նախագծերը պարունակում էին Ընկերության կողմից վարձված՝ անշարժ գույքի գնահատման մասնավոր ընկերություն «Տոսպ» ՍՊԸ-ի կողմից հունիս ամսին տրամադրված անշարժ գույքի գնահատման հաշվետվություններում սահմանված շուկայական արժեքին համապատասխան փոխհատուցման առաջարկներ:

6. 2010 թվականի դեկտեմբերի 21-ին Ընկերությունը հայցեր է ներկայացրել Կոտայքի մարզի դատարան (Մարզային դատարան) սեփականատեր հանդիսացող դիմումատուների դեմ՝ համապատասխանաբար 2010 թվականի հունիսին եւ նոյեմբերին «Տոսպ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված գնահատման եւ վերագնահատման հաշվետվությունների հիման վրա (որոնք ցույց էին տալիս, որ շուկայական արժեքում փոփոխություն չէր եղել): Մարզային դատարանն Ընկերության պահանջով չէր ծանուցել սեփականատեր հանդիսացող դիմումատուներին տվյալ հայցերի մասին այն հիմքով, որ Որոշման մեջ առկա էին որոշակի անճշտություններ՝ տվյալ հողակտորների չափսերի վերաբերյալ:

7. 2011 թվականի փետրվարի 10-ին Կառավարությունն ընդունել է թիվ 100-Ն որոշումը, որով փոփոխություններ է կատարել Որոշման մեջ՝ սահմանելու համար դիմումատուների (բացի Ծովինար Մաթեւոսյանից եւ Արարատ Տեր-Մկրտչյանից) հողակտորների ճշգրիտ չափսերը:

8. 2011 թվականի փետրվարի 18-ին Ընկերությունը սեփականատեր հանդիսացող դիմումատուների դեմ հայցեր է ներկայացրել Մարզային դատարան՝ նրանց հողակտորները փոխհատուցում վճարելու դիմաց ձեռք բերելու նպատակով: Ի պաշտպանություն իր հայցերի՝ այն վկայակոչել է 2011 թվականի փետրվարի 10-ի փոփոխություններով Որոշումը, համապատասխանաբար 2010 թվականի հունիսի եւ նոյեմբերի գնահատման եւ վերագնահատման հաշվետվությունները եւ «Տոսպ» ՍՊԸ-ի կողմից տրված վկայականները, որոնցում նշված էին տվյալ հողակտորների ճշգրտված չափսերը, եւ որոնք պարունակում էին

համապատասխան ճշգրտումներ՝ շուկայական գնի վերաբերյալ (գումարներն ավելացվել կամ պակասեցվել էին որոշ դիմումատուների համար կամ մնացել էին անփոփոխ մյուսների համար):

9. Սեփականատեր հանդիսացող դիմումատուները գրավոր փաստարկներ են ներկայացրել՝ կասկածի տակ դնելով օտարման համար հանրային շահի առկայությունը, նշելով, որ տվյալ գյուղական համայնքի բնակիչները զրկվելու էին իրենց համար կենսական նշանակություն ունեցող գույքից այն իմաստով, որ նրանք այլեւս չէին կարողանա մշակել իրենց հողերը: Նրանք այնուհետեւ պնդել են, որ ամբողջ գործընթացը կամայական է եղել: Մասնավորապես Ընկերությանը չէր հաջողվել օտարման գործընթացը սկսել Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո (տե՛ս վերեւում՝ 4-րդ պարբերությունը) եռամսյա ժամկետի ընթացքում, այսինքն՝ մինչեւ 2010 թվականի հուլիսի 10-ը՝ այդպիսով կորցնելով նրանց գույքը ձեռք բերելու իրավունքը («Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» 2006 թվականի նոյեմբերի 27-ի օրենքի (Օրենք) 10-րդ եւ 16-րդ հոդվածներ): Ընդ որում, իր հայցերն «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» օրենքին համապատասխան անշարժ գույքի գնահատման հաշվետվություններով հիմնավորելու փոխարեն Ընկերությունը ներկայացրել էր վկայականներ (գրություններ), որոնք չէին կարող նրանց գույքի շուկայական արժեքի որոշման համար օրինական հիմք ծառայել: Անգամ եթե այդ վկայականներում նշվում էին իրենց գույքի ճշգրիտ չափերը, դրանցում նշված շուկայական արժեքը հիմնված չէր ճշգրիտ չափերի վրա՝ հաշվի առնելով, որ նրանց հողակտորների չափերի ճշգրտումներից հետո որեւէ նոր գնահատում չէր կատարվել:

10. Վարույթի ընթացքում սեփականատեր հանդիսացող դիմումատուները Մարզային դատարան են ներկայացրել ի պատասխան իրենց հարցմանն Անշարժ գույքի պետական ռեգիստրի կողմից տրված գրավոր պարզաբանում այն մասին, որ տվյալ վկայականներն «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» օրենքի 11-րդ հոդվածի նպատակներով չէին կարող համարվել գնահատման հաշվետվություն:

11. 2011 թվականի ապրիլին Մարզային դատարանը ծանուցել է դիմումատուներ Գուրգեն Ղազարյանին, Հրանուշ Առուստամյանին, Անահիտ Նալթակյանին, Համբարձում Նալթակյանին, Արկադի Բադալյանին, Արմինե Նալթակյանին, Վարդանուշ Նալթակյանին, Արշալույս Աբրահամյանին, Ռուդոլֆ Աբրահամյանին, Ռադիկ Աբրահամյանին, Նիկոլայ Առուստամյանին, Լեւոն Առուստամյանին, Սերոժ Նալթակյանին, Նաիրա Նալթակյանին, Վարսենիկ Նալթակյանին եւ Արարատ Տեր-Մկրտչյանին (համատեղ սեփականատեր հանդիսացող դիմումատուներ) այն մասին, որ նրանք ներգրավվել էին վարույթում որպես համապատասխանողներ: Համատեղ սեփականատեր հանդիսացող դիմումատուները ներկայացրել են նմանատիպ փաստարկներ (տե՛ս վերեւում՝ 9-րդ պարբերությունը):

12. Մարզային դատարանը մերժել է իրենց գույքի դատափորձագիտական գնահատում նշանակելու վերաբերյալ դիմումատուների պահանջն այն հիմքով, որ «Տոսպ» ՍՊԸ-ն անշարժ գույքի լիցենզավորված գնահատող էր, եւ որ հետագայում տրված վկայականներն ընդամենը լրացրել են նախկինում ներկայացված գնահատման եւ վերագնահատման հաշվետվությունները:

13. 2011 թվականի հունիսի 14-ին կայացված թվով 10 վճիռներով Մարզային դատարանը թույլատրել է օտարումը՝ Ընկերության կողմից առաջարկված փոխհատուցման գումարի վճարմամբ՝ օրենքով սահմանված 15% հավելումով (մանրամասների համար տե՛ս 2-րդ հավելվածը): Հիմնվելով Քաղաքացիական օրենսգրքի 328-րդ եւ 329-րդ հոդվածների (ամսական սահմանաչափերի հաշվարկման) վրա՝ Մարզային դատարանը գտել է, որ Ընկերությունը պահպանել է համապատասխան ժամկետները (պայմանագրերն ուղարկելու եւ փոխհատուցման գումարները դեպոնացնելու համար), քանի որ նրանց վերջին օրերը համընկել էին ոչ աշխատանքային օրերի հետ՝ երկարաձգելով դրանք մինչեւ հաջորդ աշխատանքային օրը: Այն նաեւ գտել է, որ գույքի գնահատումը կատարվել էր կիրառելի օրենսդրությանը համապատասխան, եւ որ փոխհատուցումը ողջամիտ էր:

14. 2011 թվականի հուլիսի 14-ին դիմումատուները վերաքննիչ բողոք են ներկայացրել՝ կրկնելով իրենց փաստարկները՝ Ընկերության կողմից համապատասխան ժամկետները չպահպանելու եւ գնահատման գործընթացում խախտումների մասին, ինչը հանգեցրել էր ոչ ողջամիտ փոխհատուցման: Համատեղ սեփականատեր հանդիսացող դիմումատուները պնդել են, որ Ընկերությանը չի հաջողվել որեւէ գործողություն ձեռնարկել համատեղ սեփականության իրենց մասնաբաժինների առնչությամբ: Մարզային դատարանը սխալվել է Քաղաքացիական օրենսգրքի 329-րդ հոդվածի մեկնաբանման եւ կիրառման առումով, քանի որ մասնավոր իրավունքի կանոնները չէին կարող կիրառելի լինել հանրային շահի համար գույքից հարկադրաբար զրկելու իրավահարաբերության նկատմամբ, որը կարգավորվում էր ձեռք բերողի գործողությունների ժամկետների հաշվարկի համար հատուկ կանոններ պարունակող Օրենքով:

15. 2011 թվականի սեպտեմբերին եւ հոկտեմբերին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը որոշումներ է կայացրել, որոնցով ամբողջությամբ ուժի մեջ է թողել Մարզային դատարանի վճիռները: Ինչ վերաբերում է համատեղ սեփականատեր հանդիսացող դիմումատուներին, ապա այն հիմնվել է Քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի վրա, որի համաձայն՝ համատեղ սեփականության յուրաքանչյուր սեփականատեր իրավունք ուներ տնօրինելու համատեղ սեփականություն հանդիսացող գույքը, եթե այլ բան նախատեսված չէր համատեղ սեփականատերերի համաձայնությամբ, ինչը թույլ կտար հետեւություն անել, որ նման դեպքերում առկա է եղել կանխավարկած այն մասին, որ բոլոր սեփականատերերը հաստատել էին այն գործարքը, որը կնքվել էր սեփականատերերից մեկի կողմից:

16. Դիմումատուները վճռաբեկ բողոքներ են ներկայացրել, որոնք 2011 թվականի նոյեմբերի 23-ին, դեկտեմբերի 7-ին, 14-ին եւ 23-ին Վճռաբեկ դատարանի կողմից անընդունելի են ճանաչվել հիմքերի բացակայության պատճառով:

17. Սահմանադրական դատարանը Քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի (տե՛ս վերեւում՝ 15-րդ պարբերությունը) սահմանադրականության վերաբերյալ 2012 թվականի փետրվարի 24-ի իր որոշման մեջ նշել է, որ դրա կիրառումը հեռու էր որոշակի լինելուց դատական պրակտիկայում, եւ շեշտել է գույքի համատեղ սեփականության բոլոր սեփականատերերի իրավունքների պաշտպանության կարեւորությունը՝ նշելով, որ համատեղ սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ սեփականատերերից մեկի կողմից գործարք կնքվելու դեպքում պահանջվում է բոլոր համատեղ սեփականատերերի համաձայնությունը:

18. Դիմումատուները բողոք են ներկայացրել, որ նրանք զրկվել են իրենց գույքից՝ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջների խախտմամբ:

ԴԱՏԱՐԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

19. Դատարանն ի սկզբանե նշել է, որ դիմումատուներ Յուրիկ Նալթակյանը, Մարգուշ Բադալյանը եւ Խորեն Նալթակյանը գանգատը ներկայացնելուց հետո մահացել են (համապատասխան ամսաթվերի համար տե՛ս Հավելված I): Նրանց ժառանգները՝ համապատասխանաբար դիմումատուներ Երվանդ Նալթակյանը, Արկադի Բադալյանը եւ Սերոժ Նալթակյանը, դիմել են նրանց փոխարեն գանգատի առնչությամբ քննությունը շարունակելու համար:

20. Հաշվի առնելով ներկայացված փաստաթղթերը եւ նախադեպային իրավունքի համապատասխան սկզբունքները՝ Դատարանն ընդունում է, որ դիմումատուներ Երվանդ Նալթակյանը, Արկադի Բադալյանը եւ Սերոժ Նալթակյանն ունեն անհրաժեշտ *locus standi* (դատարան դիմելու

իրավունքը)՝ մասնակցելու վարույթներին մահացած դիմումատուների (տե՛ս վերեւում՝ 19-րդ պարբերությունը) անունից (տե՛ս Մնացականյանն ընդդեմ Հայաստանի [*Mnatsakanyan v. Armenia*], թիվ 2463/12, §§ 39-43, 2022 թվականի դեկտեմբերի 6, հաջորդող հղումներով):

21. Կառավարությունը նշել է, որ Սահմանադրական դատարանի 2012 թվականի փետրվարի 24-ի որոշումը կայացվելուց հետո դիմումատուները (բացի Վարսենիկ Նալթակյանից, Լյովա Սամսոնյանից եւ Ալեքսան Թավաքալյանից) փորձել են վերաբացել իրենց գործերը, սակայն Դատարանին չեն տեղեկացրել նրանց բողոքներն անընդունելի ճանաչելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշումների մասին՝ պնդելով, որ դա չանելը հանգեցրել էր գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահման:

22. Դատարանը վերահաստատում է, որ տեղեկատվություն չտրամադրելու ոչ բոլոր բացթողումներն են հանգեցնում չարաշահման. նշված տեղեկատվությունը պետք է վերաբերի այն կարեւոր զարգացումներին, որոնք խոչընդոտում են Դատարանի՝ փաստերի լիարժեք իմացությամբ գործով որոշում կայացնելը (տե՛ս Գեւորգյանը եւ այլք (որոշում) [*Gevorgyan and others* (dec.)], թիվ 66535/10, § 33, հետագա հղումներով):

23. Վճռաբեկ դատարանը մերժել է վարույթը վերաբացելու մասին վերը նշված դիմումատուների պահանջները՝ առանց վիճարկվող իրավական դրույթների մեկնաբանման եւ կիրառման վերաբերյալ լրացուցիչ վերլուծության: Այդ պատճառով Դատարանը համոզված չէ, որ դիմումատուների կողմից տվյալ զարգացումների մասին չտեղեկացնելը հանգեցրել է անհատական գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահման (որպես համեմատություն տես վերեւում հիշատակված՝ Գեւորգյանը եւ այլք գործը, §§ 34-39): Հետեւաբար այն մերժում է Կառավարության առարկությունը:

24. Դատարանը նշում է, որ սույն բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ, ոչ էլ անընդունելի է որեէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

25. Կողմերի համար ընդհանուր դիրքորոշում է այն, որ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ նախադասության իմաստով տեղի է ունեցել «գույքից զրկում»:

26. Կիրառելի ընդհանուր սկզբունքներն ամփոփվել են *Վիստինշը եւ Պերեպյոլկինսն ընդդեմ Լատվիայի* գործում ([GC] [ՄՊ], թիվ 71243/01, §§ 95-99 եւ 108-114, 2012 թվականի հոկտեմբերի 25, տե՛ս նաեւ Օսմանյանը *եւ Ամիրաղյանն ընդդեմ Հայաստանի* [*Osmanyan and Amiraghyan v. Armenia*], թիվ 71306/11, §§ 51-53, 60 եւ 62-63, 2018 թվականի հոկտեմբերի 11):

27. Չի վիճարկվում այն հարցը, որ օտարումը կատարվել է «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» 2006 թվականի նոյեմբերի 27-ի օրենքին համապատասխան (Օրենք): Այնուամենայնիվ, դիմումատուները պնդում էին, որ անկանխատեսելի էր այն, թե ինչպես էր ներպետական դատարանը մեկնաբանել եւ կիրառել Օրենքը:

28. Հաշվի առնելով այն, թե ինչպես են ներպետական դատարանները դիտարկել դիմումատուի փաստարկները, ներառյալ՝ համապատասխան ժամկետների պահպանման, գույքի գնահատման եւ փոխհատուցման հաշվարկի, եւ որ ամենակարեւորն է, համատեղ սեփականատերերի կողմից օտարման գործընթացին ներգրավված չլինելու առնչությամբ (տե՛ս վերեւում՝ 9-15-րդ եւ 17-րդ պարբերությունները), Դատարանը դեռեւս կասկածում է, թե արդյոք վիճարկվող օտարումը կարող է համարվել կատարված «օրենքով նախատեսված պայմաններով»: Այնուամենայնիվ, Դատարանը անհրաժեշտ չի համարում լուծել այդ հարցը, քանի որ վիճարկվող օտարումը խախտում է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածն այլ պատճառներով (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), վերեւում հիշատակված՝ Վիստինշի եւ Պերեպյոլկինսի գործը, § 105 եւ ստորեւ՝ 30-րդ պարբերությունը):

29. Ինչ վերաբերում է վիճարկվող օտարման նպատակի իրավաչափությանը, ապա Կառավարությունը հիմնվել է Որոշման մեջ նշված պատճառների վրա (տե՛ս վերեւում՝ 3-րդ պարբերությունը): Դատարանը չունի որեւէ համոզիչ ապացույց, որի հիման վրա կեզրակացներ, որ այդ պատճառներն ակնհայտորեն զերծ էին որեւէ ողջամիտ հիմքից (որպես համեմատություն տե՛ս *Տկաչեւն ընդդեմ Ռուսաստանի* [*Tkachevy v. Russia*] գործը, թիվ 35430/05, § 50, 2012 թվականի փետրվարի 14, եւ տե՛ս վերեւում հիշատակված՝ Օսմանյանի եւ Ամիրաղյանի գործը , § 61):

30. Ի վերջո, Դատարանը վերահաստատում է, որ համապատասխան օրենսդրությամբ նախատեսված փոխհատուցման պայմաններն էական նշանակություն ունեն ցանկացած գնահատման համար այն առումով, թե արդյոք վիճարկվող միջոցով պահպանվում է անհրաժեշտ արդարացի հավասարակշռությունը, եւ մասնավորապես, արդյոք այն անհամաչափ բեռ է ստեղծում դիմումատուների համար (տե՛ս վերեւում հիշատակված՝ Վիստինշի եւ Պերեպյոլկինսի գործը, §§ 110-114):

31. Ներպետական իրավունքի համաձայն՝ դիմումատուները պետք է իրենց գույքի գնահատված շուկայական արժեքին համապատասխան լրիվ փոխհատուցում ստանային եւ 15% հավելում՝ այդ գումարին: Այնուամենայնիվ, Մարզային դատարանը դիմումատուների փոխհատուցման չափը որոշել է միայն «Տոսպ» ՍՊԸ-ի կողմից նախապատրաստված գնահատման հաշվետվությունների հիման վրա՝ Որոշման մեջ փոփոխություններ կատարվելուց հետո տրված վկայականներով, եւ մերժել է իրենց գույքի իրական շուկայական արժեքը որոշելու համար փորձաքննություն նշանակելու մասին դիմումատուների պահանջը, որը, ինչպես իրենք էին պնդում, գնահատվել էր ոչ բավարար (տե՛ս վերեւում՝ 7-8-րդ եւ 12-13-րդ պարբերությունները):

32. Ելնելով վերոնշյալից՝ դիմումատուները, օրենքով այլընտրանքային գնահատման հաշվետվություններ ներկայացնելու հնարավորություն ունենալով, չեն օգտվել այդ հնարավորությունից եւ չեն պարզաբանել դա չանելու

պատճառները (որպես համեմատություն տե՛ս Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի [*Minasyan and Semerjyan v. Armenia*] գործը, թիվ 27651/05, § 85, 2009 թվականի հունիսի 23, եւ վերեւում հիշատակված՝ Օսմանյանի եւ Ամիրաղյանի գործը, § 20):

33. Հաշվի առնելով Մարզային դատարանի կողմից իր հայեցողական լիազորություններն իրականացնելուց հրաժարվելը դիմումատուների գույքի փորձագիտական գնահատման մասով այն դեպքում, երբ վերջիններս, ինչպես նշվել է, այլընտրանքային գնահատում չեն ցանկացել՝ Դատարանն իր տրամադրության ներքո առկա նյութերի հիման վրա գտնում է, որ առկա չեն այն բաղադրիչները, որոնք բավարար են ցույց տալու համար, որ դիմումատուների հողի շուկայական արժեքն էականորեն ցածր է գնահատվել (տե՛ս, *mutatis mutandis,* վերեւում հիշատակված՝ *Օսմանյանի եւ Ամիրաղյանի* գործը, § 66):

34. Ելնելով վերոնշյալից՝ դիմումատուները ներպետական դատարաններ եւ Դատարան են ներկայացրել փաստարկներ (տե՛ս վերեւում՝ 9-րդ եւ 11-րդ պարբերությունները), որ որպես գյուղական տարածքում ապրող մարդիկ նշված հողը նրանց գործունեության եւ գոյության միջոցն էր: Ներպետական դատարաններն այս հիմնական հայեցակետին չեն անդրադարձել, ոչ էլ հաշվի են առել փոխհատուցման գումարի վերաբերյալ իրենց որոշումներում այն առումով, որ նրանք չեն անդրադարձել այն հարցին, թե արդյոք տրվող փոխհատուցումը ծածկելու էր դիմումատուների իրական կորուստը, կամ արդյոք այն առնվազն բավարար էր, որ նրանք իրենց բնակության տարածքում համարժեք հող ձեռք բերեին (նույն տեղում, §§ 69-71):

35. Ելնելով վերոնշյալից՝ Դատարանը գտնում է, որ դիմումատուները ստիպված են եղել ավելորդ անհատական բեռ կրել: Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի խախտում:

II. ԱՅԼ ԲՈՂՈՔՆԵՐ

36. Հիմնվելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վրա՝ դիմումատուները նաեւ մի շարք բողոքներ էին բարձրացրել արդար լսումների բացակայության առնչությամբ: Հաշվի առնելով գործի փաստական հանգամանքները, կողմերի փաստարկները եւ իր վերոնշյալ եզրահանգումները՝ Դատարանը համարում է, որ այն անդրադարձել է գործով հիմնական իրավական հարցին, եւ որ կարիք չկա քննության առնելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն դիմումատուների ներկայացրած բողոքները (տե՛ս Հակոբյանը եւ Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի [*Hakobyan and Amirkhanyan v. Armenia*], թիվ 14156/07, § 56, 2019 թվականի հոկտեմբերի 17, եւ Ղասաբյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի, թիվ 23566/05, § 29, 2014 թվականի նոյեմբերի 13):

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

37. Դիմումատուները պահանջել են 571 969 եվրո՝ որպես նյութական վնասի փոխհատուցում, որը ներառում էր հողի (արդյունաբերական նշանակության) շուկայական արժեքը 2022 թվականի դրությամբ՝ օրենքով սահմանված 15% հավելումով: Բացի այդ, նրանք խնդրել են Դատարանին իրենց շնորհել փոխհատուցում ոչ նյութական վնասի համար եւ պահանջել են 14 685 եվրո՝ Դատարանում կրած ծախսերի եւ ծախքերի համար:

38. Կառավարությունը վիճարկել է այս պահանջները:

39. Հաշվի առնելով հայտնաբերված խախտման բնույթը՝ Դատարանը գտնում է, որ դիմումատուները, անկասկած, կրել են որոշակի նյութական եւ ոչ նյութական վնասներ (տե՛ս, *mutatis mutandis,* վերեւում հիշատակված՝ *Օսմանյանի եւ Ամիրաղյանի գործը*, § 75): Դատարանը, կատարելով իր գնահատումն արդարության սկզբունքի հիման վրա, դիմումատուներին շնորհում է II հավելվածում նշված գումարները՝ վնասի բոլոր կետերի մասով՝ գումարած նրանցից գանձման ենթակա ցանկացած հարկ:

40. Վերջում, հաշվի առնելով իր տրամադրության տակ առկա փաստաթղթերը, Դատարանը ողջամիտ է համարում դիմումատուներին համատեղ շնորհել 2 000 եվրո՝ Դատարանի վարույթում կրած ծախսերի եւ ծախքերի համար՝ գումարած նրանցից գանձման ենթակա ցանկացած հարկ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. *Հայտարարում է* գանգատն ընդունելի.

2. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում.

3. *Վճռում է,* որ կարիք չկա քննության առնելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն ներկայացված բողոքների ընդունելիությունը եւ կատարելու դրանց ըստ էության քննություն.

4. *Վճռում է, որ*՝

ա) պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուներին վճարի հետեւյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

(1) նյութական եւ ոչ նյութական վնասի դիմաց՝ II հավելվածում նշված գումարները,

(2) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 2 000 եվրո (երկու հազար եվրո)՝ գումարած դիմումատուներից գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական

կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

5 Մերժում է դիմումատուների՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2023 թվականի հուլիսի 4-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Վալենտին Նիկոլեսկու՝	Անյա Սիբերտ Ֆուա՝
Բաժանմունքի քարտուղարի տեղակալի պաշտոնակատար	Նախագա

ՀԱՎԵԼՎԱԾ

Դիմումատուների ցանկը.

Թիվ	Դիմումատուի անունը	Ծննդյան տարեթիվը	Քաղաքացիությունը	Բնակության վայրը
1.	Երվանդ ՆԱԼԹԱԿՅԱՆ	1958	ՀՀ	Արտավազ
2.	Արշալույս ԱԲՐԱՀԱՄՅԱՆ	1950	ՀՀ	Փյունիկ
3.	Մեխակ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ	1948	ՀՀ	Փյունիկ
4.	Ռադիկ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ	1982	ՀՀ	Փյունիկ
5.	Ռուդոլֆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ	1972	ՀՀ	Արտավազ
6.	Արթուրիկ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ	1964	ՀՀ	Արտավազ
7.	Հրանուշ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ	1968	Փախստականի կարգավիճակ	Արտավազ
8.	Լեւոն ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ	1987	Փախստականի կարգավիճակ	Արտավազ
9.	Նիկոլայ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ	1989	Փախստականի կարգավիճակ	Արտավազ
10.	Արկադի ԲԱԴԱԼՅԱՆ	1961	ՀՀ	Հրազդան
11.	Մարգուշ ԲԱԴԱԼՅԱՆ	1935 Մահացել է 2020 թվականին	ՀՀ	Արտավազ
12.	Գուրգեն ՂԱՋԱՐՅԱՆ	1968	ՀՀ	Արտավազ
13.	Ծովինար ՄԱԹԵՎՈՍՅԱՆ		ՀՀ	Արտավազ
14.	Անահիտ ՆԱԼԹԱԿՅԱՆ	1957	ՀՀ	Արտավազ
15.	Արմինե ՆԱԼԹԱԿՅԱՆ	1986	ՀՀ	Արտավազ
16.	Համբարձում ՆԱԼԹԱԿՅԱՆ	1985	ՀՀ	Արտավազ
17.	Խորեն ՆԱԼԹԱԿՅԱՆ	1956 Մահացել է 2017 թվականին	ՀՀ	Արտավազ
18.	Նաիրա ՆԱԼԹԱԿՅԱՆ	1979	Փախստականի կարգավիճակ	Արտավազ
19.	Սերոժ ՆԱԼԹԱԿՅԱՆ	1981	ՀՀ	Արտավազ
20.	Վարդանուշ ՆԱԼԹԱԿՅԱՆ	1961	ՀՀ	Արտավազ
21.	Վարսենիկ ՆԱԼԹԱԿՅԱՆ	1982	ՀՀ	Արտավազ
22.	Յուրիկ ՆԱԼԹԱԿՅԱՆ	1929 Մահացել է 2020 թվականին	ՀՀ	Արտավազ

Թիվ	Դիմումատուի անունը	Ծննդյան տարեթիվը	Քաղաքացիությունը	Բնակության վայրը
23.	Լյովա ՍԱՄՍՈՆՅԱՆ	1962	ՀՀ	Երեւան
24.	Ալեքսան ԹԱՎԱՔԱԼՅԱՆ	1979	ՀՀ	Հրազդան
25.	Արարատ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ	1968	ՀՀ	Արտավազ

ՀԱՎԵԼՎԱԾ II

Դիմումատուների ցանկը՝ ըստ գույքի միավորների.

Թիվ	Դիմումատուի անունը	Հողակտորների չափը հեկտարով եւ սեփականության ձեւը	Հողի յուրաքանչյուր միավորի դիմաց ներպետական փոխհատուցման չափը հայկական դրամով	Նյութական եւ ոչ նյութական վնասի համար շնորհվող գումարը եվրոյով
1.	Երվանդ ՆԱԼԹԱԿՅԱՆ Արմինե ՆԱԼԹԱԿՅԱՆ Համբարձում ՆԱԼԹԱԿՅԱՆ Վարդանուշ ՆԱԼԹԱԿՅԱՆ	1,13 հա, համատեղ սեփականություն	2,536,400	10,800 (միասին)
2.	Խորեն ՆԱԼԹԱԿՅԱՆ Անահիտ ՆԱԼԹԱԿՅԱՆ Վարսենիկ ՆԱԼԹԱԿՅԱՆ Սերոժ ՆԱԼԹԱԿՅԱՆ Նաիրա ՆԱԼԹԱԿՅԱՆ	1,012 հա, համատեղ սեփականություն	2,290,800	10,800 (միասին)
3.	Յուրիկ ՆԱԼԹԱԿՅԱՆ	0,475 հա	1,114,600	10,800 (որը պետք է վճարվի Երվանդ Նալթակյանին)
4.	Մեխակ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Արշալույս ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ռադիկ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ռուդոլֆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ	1,051 հա, համատեղ սեփականություն	2,344,300	10,800 (միասին)
5.	Գուրգեն ՂԱԶԱՐՅԱՆ	Երեք միավոր՝ 0,399 հա, 0,73 հա եւ 0,94 հա, համատեղ սեփականություն	համապատասխանաբար՝ 941,850, 698,050 եւ 624,800	10,800

Թիվ	Դիմումատուի անունը	Հողակտորների չափը հեկտարով եւ սեփականության ձեւը	Հողի յուրաքանչյուր միավորի դիմաց ներպետական փոխհատուցման չափը հայկական դրամով	Նյութական եւ ոչ նյութական վնասի համար շնորհվող գումարը եվրոյով
6.	Արթուրիկ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ Հրանուշ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ Լեւոն ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ Նիկոլայ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ	1,223 հա, համատեղ սեփականություն	1,262,700	10,800 (միասին)
7.	Արկադի ԲԱԴԱԼՅԱՆ Մարգուշ ԲԱԴԱԼՅԱՆ	0,798 հա, համատեղ սեփականություն (համապատասխանաբար 1/4 եւ 3/4)	656,650	10,800 (միասին)
8.	Լյովա ՍԱՄՍՈՆՅԱՆ	0,408 հա	966,000	10,800
9.	Ալեքսան ԹԱՎԱՔԱԼՅԱՆ	Երկու միավորներ 0,479 հա եւ 0,094 հա	1,736,350	10,800
10.	Ծովինար ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Արարատ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ	0,49 հա, համատեղ սեփականություն	1,130,450	10,800 (միասին)